

ԽԱՅԱԿԱՆ

ԳԱԻԱՌԱՑԻՆԵՐՈՒ
ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍԸ

Ա. ՏԱՐԻ

15 ՓԵՏՐՈՒՄ 1912

ԹԻԻ 9

Խմբագրապետ
Մ. ԻՓԷՔՃԵԱՆ

Արտոնահատ
Հ. ԹԱՊԻՊԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շինարար ըլլանք (խմբ.)
Աշխարհի յեղափոխական մեծ շարժումները
Հերոսապետին
Թշուառ ծերուկը

Գ. ԱԹԷՇԵԱՆ
ԹԱԴԷՈՍ ԺԱՄԿՈՉԵԱՆ
Յ. ՄԵՂԱՐՈՒՆԻ
Ս. ՏԵՐ - ՅԱԿՈԲԵԱՆ

Գաղափարային Լուրեր

ԱՄԱՍԻԱ

Տպագր. ՅՈՎ. ՆԱՆԵԱՆ ԵՎ ԵԱՐՏՈՒՄԵԱՆ

ԱՄԱՍԻԱԻ ՀԱՅՅԷՆ

آماسیه ده «آماسیه» غزنه سی مدیریت

Խմբագրության «ԱՄԱՍԻԱ» Կիսաանեսայ հանդեսի - Ամասիա
Rédaction de la Revue «AMASSIA», a Amassia (Turquie d'Asie)

ԱՄԱՍԻԱ

Կը հրատարակուի ամէն ամսու ինն եւ 15ին, բուրբերէն եւ հայերէն
բաժիններով: Թուրքերէն բաժինը մօտաւորապէս 4 էջ, իսկ հայերէնը 12
էջ. երկու բաժինը միասին միշտ 16 էջ պիտի ըլլայ: Բաժանորդներուն
սարեկան 24 թիւ պիտի տրուի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թուրքիա սարեկան	1 մեճիս	Սրտասանան սարեկան	5 ֆր.
» վեցանեսայ	0.50 »	» վեցանեսայ	2.50 »

Բաժնեգինը բացարձակապէս կանխիկ է: Ծանուցումներու համար ա-
ռանձին նշանատուր պայմաններ կը տրուին:

Տաւր օրինակ «Ամասիա» սպառողին մէկ օրինակ նուէր:

ԱՄԱՍԻԱՅԻ ԲՈՒՅՈՒՆՆԵՐՈՒՆ

Թերթիս տեղական ցրուիչն ու հաւաքիչն է Պր. Յովսէփ Բալուեան, որուն մեր տեղա-
կան բաժանորդները իրենց բաժնեգինները վճարելով պարտին ստացագիր պահանջել:

ԽԱՐԱԿԱՆ

ԳԱԽԱՌԱՑԻՆԵՐՈՒ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍԸ

Ա. ՏԱՐԻ

15 ՓԵՏՐՈՒԱՐ 1912

ԹԻԻ 9

Խմբագրական

ՃԻՆԱՐԱՐ ԸՆԼԱՆՔ

Գաւառներու մէջ կը տեսնենք յաճախակի կուսակցական պառակտումներ, ազգային ու կրթական մարմիններու միջև բացուած խոր խրամատներ և վերջապէս այս ու այն դատակարգին ու դաւանանքին պատկանողներու մէջտեղ սառն անտարբերութիւններ ու յարաբերութիւններու ցրտացումներ, որոնք ուղղակի կ'ապառնան՝ մեր ազգային շահերուն ու մեր ազգային յառաջդիմութեան: Կ'ընդունիմ որ թէև այս պարագաները յաճախակի կ'ունենան իրենց լուրջ, իրաւացի ու արամաբանական պատճառները, հինի և նորի անխուսափելի պայքարները այս կամ այն դատակարգի փոխադարձօրէն շահերու պատմական հետապնդումը, եայլն. սակայն շատ անգամ կամ գրեթէ շատ ու շատ անգամ այդ պառակտումները ծագում կառնեն՝ այս կամ այն անհատին անձնական փառասիրութենէն ու անհատական շահերու հետապնդումներէն: Այս պառակտումներու ստեղծման և աւելի ու աւելի անոնց սուր հանգամանք ստանալուն գլխաւոր պատասխանատուներէն մին ալ թերթերու կաւառային թղթակիցներն են:

Սահմանադրական կարգերու հաստատումէն անմիջապէս վերջ նոր շարժում մը, նոր գործունէութիւն մը ծայր տուաւ գաւառներու մէջ. ամէն գրիչ բռնել գիտցողներ սկսան այս կամ այն թերթին մէջ բաներ մը մրտաւել: Եթէ որոշ հարցերու շուրջ լուրջ յօդուածներ չէին կրնար գրել, սկը-

սան գաւառային թղթակցութիւններ գրելու երեւումի մարմաշը ամենուն մէջ կ'ալեծփի. պէտք է բան մը գրել. հոգ չէ թէ ան իրականութենէ իսպառ հեռի ըլլայ, հոգ չէ թէ ան այս կամ այն միութիւններու, հաստատութիւններու արժանապատուութիւնը վիրաւորէ անիրաւի: Հոգ չէ թէ ան այս կամ այն մարմինը, այս կամ այն կազմակերպութիւնը, այս կամ այն դասակարգերը, այս կամ այն գաւառանքները և վերջապէս այս կամ այն անհատները իրարու դէմ լարէ ու անհամաձայնութիւններու պատճառ գաւառայ, կը բռնէ որ, իրենք բան մը գրած ըլլալու գոհունակութիւնը վայելեն: Ասոնք թուելով ըսել չեմ ուզեր թէ պառակտումներու տեղի չտալու համար ճշմարտութիւնները պէտք է քօյարկուին: Ո՛չ, արդէն ճշմարտութիւններու յայտարարութիւնները շատ քիչ անգամ պառակտումներու տեղի կուտան: Բայց այդ թղթակցութիւններուն գնէ մեծամասնութիւնը ճշմարտութիւններու արամարանութիւններու և այս կամ այն թաղիիկն, անհատին ու մարմինին հաճելի երեւոյլ տրամադրութիւնը յորացնող, քծնող հոգիներու արտադրութիւններ են: Այդ թղթակցութիւններու մէջ կը նշմարուին իրողութեան հակառակ երեւոյթներ, չափազանցուած ու անպատկառ սուտեր, անձնական փառասիրութեան յորացումներ, ծայրահեղ գնահատումներ խաբեր համար՝ գործեալ խաբեր համար անվայել քննադատութիւններ և դեռ ինչեր ու ինչեր, որ մեզի համար անհասարար թէ ազգովին շինարար ըլլէն հեռի՝ տեղի կործանիչ է:

Այս պարսկաններու ստեղծման մէջ ո՛չ նուազ պատասխանատու են մամուլի ներկայացուցիչներն, որոնք իրենց թերթերու սիւնակները գաւառային թարմ լուրերով լեցուցած ըլլալու մեծամոտութիւնն ու գոհունակութիւնը վայելելու համար, քաջալերեցին գաւառային այս վնասաբեր շարժումը, հիւրընկալեցին իրենց թերթերու մէջ բոլոր անոնց գրութիւններն, որոնք ո՛չ որոշ ուղղադրութիւն և ո՛չ ալ որոշ արամարանութիւն ունին և ո՛չ ալ ինքնութիւններն ու նկարագիրներն յայտնի է: Նոյնիսկ աւելի յառաջ գնալով անոնցմէ շատերն իրենց թղթակիցները նշանակեցին, որովհետեւ անոնք, մանկական հրճուանքով մը ամէն շարժութիւնը բաներ մը պիտի գրէին շիտակ կամ սխալ: Ո՛չ, ո՛վ մամուլի ներկայացուցիչներ, ստիկա շինարար գործ չէ. ճամբայ տուաք ոյգ պիտի ներշնչուի և եթէ կուզէր գաւառին ծառայութիւն մը մատուցանել՝ Ձեր թերթերուն համար կարողագոյն անկող մնակալ ու պարտաճանաչ թղթակիցներ փնտռեցէք, որովհետեւ գաւառի զարթոնքին մէջ մեծ է անոնց գերն ու գործունէութիւնը: Ասոնք են որ իւրաքանչիւր գաւառային շարժում վեր առնելով և գիտական, պատմական ու սկզբունքային աեսակէտներով վերլուծելով զայն պիտի պատկերայնեն ժողովրդեան, միշտ անոր յառաջդիմութեան ռազմիկները ըլլալով:

Այն պարտնենքն, որոնք թեթեւութեամբ ըլլալու միամիտ մարմնէն են բռնուած, թող վազ անցնին, գոնէ իրենց ծննդավայրին սիրուն, անհրաժեշտ անտրամաբանական ու զրպարտիչ գրութիւններով քաղաքացիներու համարաշխուրթներ խանգարելն: Եթէ անկեզծ քաղաքացիներ են եւ իշխանի կաշու թեւէն վեր չէ՝ իւրաքանչիւր գաւառային խնդիր իրենց իրական վիճակներուն ուղղամտօրէն թուլ սկսելն ուղղակի իրենց անհատական ու իրաւունքային անհատականութիւններով փոխանակ գիմակի տակ գործելու: Այս կը պահանջուի իւրաքանչիւր պատուաւոր գաւառացիէ, եւ այս է չնայած ըլլալու իրական միջոցներէն մէկ: Օն ուրեմն շինարար ըլլանք եւ դադրենք փոճ փառասկիւղութիւններէ . . . :

Գ. ԱԲԷՇԵԱՆ

Պատմական

Ա. ժխարհի Յեղափոխական Մեծ Շարժումները

Բ.

ԿՐՈՆԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ԿԱՍ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԴԱՐ (Reformation)

«Ինչ որ կ'ուզէք որ ուրիշներ ձեզի ընեն, դուք ալ անոնց անանկ ըրէք»: ԶԵՄՈՒՄ

4. Հրաբուխը բարբառելու վրայ էր արդէն, անոնք որոնք մին ալ ստեղծուելու անոր պայթումը փութայնող: Անիկայ եղաւ ներողագիւցներու (Inculcates) փառաւորը. ներողագիւցները Վապին կազմէ ստորագրուած թուղթեր էին, որոնք յաճախակի զանազան բարեգործական նպատակներու համար կը շրջէին հաւատարմաներուն մէջ, անոնց սեղծութիւնն ինքնութիւն շնորհելով, եւ փոխարէն կը շրջէին գաւառ մը ստանալով պատկերով գանձարանին համար: Եւ այս ապօրինի առուստուրք արդար զարթոյթ միայն յառաջ ընթացող մշակութային մեծա-

«Խղճի դեմ գործելը ոչ ուղիւ է եւ ոչ ալ արդար»:

ԼՈՒՏԵՐ

գոյն մասին, եւ շատեր այն համոզումը գործարարին թէ՛ այդ ներողագիւցները աւելի շատ մեղքեր գործելու թոյլատուութեամբ կը ծառայէին՝ ճշտ այնպէս, ինչպէս այսօր իսկ կան մարդեր որք որական հինգ անգամ աղօթք եւ պաշտամունք կը կատարեն, եւ սակայն աղօթարանն դուրս ելածնուն պէս անբարոյութիւն, մարդասպանութիւն եւ աւազակային ամէն տեսակ սեղան կատարելէ չեն քաշուիր . . . :

Օրուան պապը՝ Լեո. Ժ., որ ասկէ առաջ մեծապէս ստատարած էր վերածնունդի ժամանակ գործին, քաջակեր հանդիսանալով հին Յայն ու Լատին հեթանոս գրականու-

թեան և նոյնիսկ իր սպարանքը դիցաբանական դէմքերով մշայն զարդարելով, և այդ կերպով ալ հաւատացեալներու գայթակղութիւնը շարժելով, այժմ ինքզինքը կը գտնէր բոլորովին անակնկալ շարժումը մը առաջ: Լեւոն Ժ., Ս. Պետրոս եկեղեցիին չիտութեանը իր օրով աւարտելու համար, ներողագիրներ սկսաւ ցրուել Եւրպիոյ Կաթողիկոս աշխարհին չորս ծայրերը, որովհետեւ Եկեղեցիին գանձարանները գրեթէ պարպուած էին այժմ: և ասկէ զատ ալ լուսագոյն մը ջոց էր մնացած:

Ուրեմն մեղաց թողութեան անշահախնդիր՝ վաճառականները ինկած էին առէն կողմ. Գերմանիա երթալու վիճակն ալ Տէյէլ անուն Տոմէնիկեան միաբանի մը երած էր: Տէյէլ իրեն հետ առնելով երկու անասուններ, մշն ներողագիրներով լեցուն, իսկ միւսը անունքմէ գոյանալիք գրամներուն յատկացուած. ճամբայ ելաւ դէպի Գերմանիա, ինչ քարոզելու և մեղաց թողութիւն վաճառելու համար: Բայց այլևս ինչ ծնած էր մեծ մալդ մը. Գերմանական միջովալորը վերջապէս արտադրած էր Լուսեմ մը, արդէն ստեղծուած նոստերները միասին յառաջ վարելու համար:

Լուսեմը, աղքատիկ հանքագործի մը գաւառէն ըլլալով հանդերձ կարողացած էր իր աչքառու տաղանդին շնորհիւ՝ Վիթթէնպէրկ համալսարանին աստուածաբանութեան Բրոֆէսոր կարգուիլ: Լուսեմ իբր Օգոստինեան կրօնաւոր, արդէն Հրուովմ ալ այցելած ըլլալով անձամբ և մօտէն դիտած էր եկեղեցիին ու եկեղեցականութեան տխուր վիճակը: Երբոր Տէյէլ իր ընկերներով ամհնայարտառոց եղանակով Ժողովուրդը համոզելու ծայրայեղ ճիգեր թափել սկսաւ, յայտարարելով նոյնիսկ թէ՛ ով որ Ս. Պետրոս եկեղեցիին չիտութեան դրամ կը վճարէ, անոր բոլոր մեղքերը ներուած պիտի ըլ-

լան, ասդին Լուսեմը, ալ համբերութիւնը սպառած, ուրիշ յազմաթիւ լողոքներու հետ միացած, սկսաւ «յանուն Քրիստոսնէութեան պատուոյն և ի դիմաց ամբողջ կաթողիկոս ղջախոյն ու Բիւրն ձայն թարձրացնել այս անկանելի նախադէմքին դէմ, և իր սուր դիտողութիւնները 95 յօդուածներու մէջ ամփոփած՝ Վիթթէնպէրկ եկեղեցիին դրան վրայ փակցուց, ըստ այն օրուան սովորութեան: Ա՛յ կռիւը յայտարարուած էր. մամուլն ալ այս խիզախ բողոքներուն արձագանքը հնչեցնելով Գերմանիոյ մէկ ծայրէն միւսը՝ հրդեհած էր բոյնդօրէն: Պատրիկիդէն կարեւորութիւն չընծայելով՝ ըսաւ թէ «Արեւելոյ կռիւ մըն է»: Բայց հրդեհը քանի երթար կը բռնավառէր, և «Արեւելոյ կռիւ»ն ալ իրական յեղափոխութեան կը վերածուէր: Դարման. — Բանագրանք:

Լեւոն Ժ. պատրիարքան ինքնապէս բանագրելոյ Լուսեմը իր բողոքներուն հերետիկոսական ու գայթակղայից բնոյթին համար: Լուսեմը խիզախօրէն Վիթթէնպէրկի հրապարակին մէջ այրեց պապին հրովարտակհանդիտաւոր կերպով, և ինքզինքն ալ սզատ և անկախ հռչակեց պապական գերիշխանութենէն, իրեն միակ առաջնորդ ընտրելով Ս. Գրքը: Ա՛յ գործերը սպառնական անաքեկիչ երևոյթ մը ստացած էին. ամբողջ Գերմանիան ապստամբութեան դրօշը պարզած էր. ա՛յ պապական գերիշխանութիւնը վտանգուած էր:

Պատը տեսնելով իր բանագրական հրովարտակին անգորութիւնը, ստիպուեցաւ դիմել Կարդուս կայսեր, որ Որմն քաղաքին մէջ ժողով մը գումարելով. ինչ հրաւիրելոյ Լուսեմը իր գայթակղայից վարդապետութիւնները հետ առնելու համար: Լուսեմը իր քեզը արդէն պաշտպանեց. «Ես չեմ կրնար եւ չեմ ալ ուզեր բան մը ես առնել. միեջեւ որ իմ գրած-

ճերուս Ս. Գրոց ոգիին կամ պարզ բանականութեան դեմ ըլլալը չապցուցուի. վասնզի խղճի դեմ գործելը ո՛չ ուղիղ է եւ ո՛չ ալ արդար»:

Հոն Լուտեր անտարակոյս կամ խարոյկի և կամ մոլեռանդ խուժանին կատալութեանը զո՛ւ պիտի երթար, եթէ կայսեր ու Գերմանական բոլոր իշխաններուն բուն համակրութիւնը իր հետ չունենար: Թէ ինչո՞ւ այդ իշխանները և նոյնիսկ կուսակցի էին, պատճառը շատ պարզ էր. նախ որ պապական ազդեցութեան տկարացումը՝ քաղաքական իշխանութեանց զօրեղայումը կ'ենթադէր, և երկրորդ, եկեղեցական ահագին հարստութիւններ անմիջական կերպով պետական գանձը պիտի տեղային: Նաև այս կամ այն անուններով, ներողագիրներու միջոցաւ պապերու ժողոված ծանրածանր տուրքերը կուգային անգամ մըն ալ հաստատելու պատմութեան մաթերիալիստական այն տեսակետը, որով պատմական ամեն տեսակ շարժումը ներքե թաղուած կը գտնուէր անտեսական հաշիւ մը:

Լուտեր իր պաշտպաններուն միջոցաւ վարդապուրիի ամուր գղեակը կը քաշուի, ինչ իր սկսած մեծ գործը աւելի ուժեղ ի գլուխ հանելու համար: Այստեղ ան իր ամենէն մահացու հարուածները սկըսու աքձակել պապականութեան դէմ, անգագար բողոքելով պապին գլխաւորութեան ու անխաղութեան, գաղտնի խոստովանութեան, կղերին ամուրիութեան, վանական կենցաղին, Սուրբերու

պատկերներուն երկրպագութեան և ամեն հակակրօնական սովորութեանց ու վարդապետութեանց դէմ, որոնք եկեղեցին այնքան հեռու քաշեր էին իր ճշմարտ նպատակէն: Հոս Լուտեր Ս. Գիրքը Լատիններէն Գերմաներէնի թարգմանելով. Ուփքլիֆի նման իր ժողովուրդին իր հասկցած լեզուով սորվեցրեց կրօնի սկզբունքները, և դեռ շատ մը պրօշլերներ ալ հրատարակելով, Գերմանական աշխարհաւոր գրականութեան համար դարձաւ Լուտեր նոյնիսկ անկէ ետք 1523 ին ամուսնացաւ Գաթերին Պօրա անուն մայրապետի մը հետ, իր իսկ անձով ցոյց տալու կուսակրօնութեան անպատեհ դրութիւնը(*):

Ա՛լ հոսանքը ընդհանրական էր եղած ամբողջ եւրոպիոյ համար. Ֆրանսա, Զրւիցերիա, Անգլիա և այլուր զանազան անուններով նոր ազանդաւորներ յառաջ եկան, ի գին հարիւր հազարաւորներու յորդանոս արեան: Որքան ալ պապականութիւնը ջանայ խափանել զայն, բայց ի գո՛ւր. «հալածանքը տարածանք» եղաւ. որքան ալ Յիսուսեան, Տոմինիկեան և այլ միաբանութիւններ հակազդել ջանային նոր հոսանքին, ընդհակառակը ան աւելի նորերու ծագում տուաւ, և վերջապէս կրօնական այս մեծ յեղափոխութեամբ հաստատուեցաւ խղճի ազատութիւնը. որ աւանդ այնքան դարեր բռնադարձուած էր անողոք կերպով, և որ իրմէ անմիջապէս ետք պիտի հռչակէր նաև մարդկային հաղափական ազատութիւնը:

Մարգուան

Թ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

(*) Արդեօք երբեմնի մեր Մերուժան վարդապետն ալ այսպէս ընել ուզելով՝ եղաւ Տիար Տիգրան Աւխարհունի:

ՀԵՐՈՍԱՊԵՏԻՆ

Ըմբոսացումի անդրանիկ հերոս
Մենք կը փափախնք ապրիլ կեանքդ փարոս .
Մե՛զ ալ տուր կայծերն հոգւոյդ հրափառ
Որ շանքեր տեղանք քեզ պէս անդադար :
Չաւակն անվեհեր հայուն քախճադէմ
Քու նայումքիդ տակ վրեժ կ'երագեմ :

Ի՞նչպէս հանդուրժել երբ խժողով վաճեւ
Արիւն կը քամեն երակներէն մեւ .
Մեր ծաղիկ կեանքին ու մեր դիակին
Ափ մը հող չեն տար, տապան մ'ալ չնշին .
Որքին անվեհեր հայուն տխրադէմ
Քու նայումքիդ տակ նոր յոյս կ'երագեմ :

Կրակ մը կայրէ մեր քախճոս հոգին .
Քու վեհ իտեալին փառիլ կաթողին՝
Մեզ համար ո՛րքան պարտ մէ նուիրական՝
Երազ՝ քրդովող մեր քունը գիշերուան :
Աննկուն հերոսն հայուն դալկադէմ
Նայումքիդ ներքեւ նոր յոյս կը դիտեմ :

Կապարիդ ծայրէն քոչին դեպ՝ հեռուն
Վրեժն ու կրակ, եւ մեջքիդ սիրուն
Փամփուռքի գոտին, եփրաքին նման,
Դարման մ'է, գիտենք, քունառի դարման :
Անեղիւղ հերոսն հայուն քախճադէմ
Քու նայումքիդ տակ նոր կեանք կ'երագեմ :

Մերք նստած խոթիս լեռներուդ հովիկ
Մտերիւ ունիւր սոխակն ու հովիկ,
Ձրոնք երգով մը տնուր, լալագին
Մերունդիս կեանքը գոգցես կ'ողբային :
Չաւակն անյողոյզ հայուն տխրադէմ
Քու նայումքիդ նոր ջանք կ'երագեմ :

Շնամուն անգուր սիրտ դու խոցես .
Ձի կեանքովդ համակ արդէն իսկ բոց ես,
Կռուէ՛ եւ շիրմի եւ մոխրի վրան,
Որոնց մեջ կեանքեր, կայծեր կը մնան :
Հարազատ գուռակն հայուն դալկադէմ
Քու նայումքիդ տակ վրեժ կը դիտեմ :

Երբ հայարս, լաղժող դուրս գաս դու հորէն,
Կամ, ո՛հ, գիւղին իշնաս մահուան անօրէն՝,
Գիտցի՛ր որ մենք ենք կեանքիդ երգարան,
Մեր սիրեն ալ անոր պիտ' դառնայ դամբան
Անմահ հերոսդ հայուն քախճադէմ .
Քու նայումքիդ տակ արեւ կ'երագեմ

ՅՈՎՀԱՆՆԵՍ Յ. ՄԵՂՄՈՒՆԻ

ՅՇՈՒԱՌ ԾԵՐՈՒԿԸ

Քաղաքին մէկ անկիւնը անշուք տան մը մէջ կը բնակէր ծերուկ մը երեք-չորս տարեկան թոռանը և իր այրի հարսին հետ։ Լուսադարարս հի մըն էր ան։ Իր ամուսնիս որ հէք բանուար մըն էր, գործատան մէջ անիւներէ յօշոտուած էր, քաղաքակրթութեան յօրինած անւանութեն, որոնք ինչօք համար, եթէ ոչ միայն լանուարին կեանքը խելու համար կարծես չի նուաճ հն։

Տան ապրուստը, այրի կնոջ վրայ կը ծանրանար։ Ան իր սրտահաստը ծեր աւներով քով թողլով, լուսոյքի, տուն տեղ աւելի որդեղու կ'երթար։ Չարաչար կ'աշխատէր, իր յոյնութիւնը կը մոռնար քաղցի արհաւիրքին առջև ու կ'աշխատէր։ Կ'աշխատէր լարուած մեքենայի մը պէս, առանց զգալու ծիւրումը, որ տագնապէն կը գործեր իր աւերները։ Սակայն բնիճուեցաւ, իր անունը կորով տեղի տուաւ դառն ցաւերու և հիւանդ դաշտ։

Վերաւոր առիւծի մը պէս կը տքար, իր դաւին մէջ իսկ մտածելով իրենց թըշուառ կայութիւնը, ինչպէս պիտի կրնար իր օրապոյտիկը հայթայթել։ Օգնութեան գերազանց գորութեան մը կարօտն էին այժմ։ Իրենց ցաւը դառն էր, բայց աւանդ հասկող չ'ի կար։ Ինչ պէտք էր բնել, ... մարտի, բայց ո՛վ պիտի մուրաց, միթէ ծերուկը պիտի համարձակէր ձեռք կար'լառել, ամօթ չէր իրեն։ Երբեմն սուսգ գործաւորը, բարեկեցիկ բնականիքի տէր անհար կը համարձակի՝ դրամը մաւրալու։ Ո՛չ, այս մեռնելն աւելի ծանր բան մըն էր ծերուկին համար, բայց ինչ պէտք էր բնել քաղցին աղաւելու համար հարսը և սիրտաւն թոռնիկը որ նմանապէս հիւանդաբէն վիճակ մ'ունէր արդէն։ Ախ, թշուառութիւններու աշխարհ, ախ անգութ ճա-

կատագիր...։ Յուսահատական հոռաշներ, սե ու դառն նոպաներու մէջ կը թողէին զինքը ու շուարուն կ'արտասուէր լոխն ու կը թափէր դուրս տանջանքի ու տառապանքի ժանրոտ մաղձերը։ «Այս կեանք չէ՛, դժոխք է, ուր կը տանջուին դրամազուր'իները, գերիները, տկարները, ո՛չ օգնող կայ, ո՛չ խղճալող։ Երբեմն բարեկամը, այժմ երես կը դարձնէ, է՛ն ո՛չ ապաքէն դրամ հունեցողը մարդկութենէ կը լքուի։ Ամէն մարդ, դրամիդ բարեկամ կ'ըլլայ եղբր, ո՛չ թէ քեզի...։ Մենք պիտի չարչարուինք, բայց ո՛չ երկար, այս թշուառութեան մէջ ո՛ր սիրտ կը դիմանայ, ո՛ր հոգի կը աւելայ, երկաթին իսկ կը հայի, ապառաժն իսկ կը փշուրի, ծովն իսկ կը ցամքի, մեր մնայ մեր ծիւրած մարմինը...։»

Շէք ծերուկ, կեանքէն աւելի մայր կը նստիւնտրէր, և միթէ լաւ չէ՞ օրը հարիւր անգամ մեռնելէն մէկ անգամ մեռնելը թշուառ էակի մը համար։ Ողբալը անօգուտ էր, պէտք էր հնարք մը խորիւր։ Ծերուկը երկա՛ր, երկա՛ր ժառճեց, ալեւոր գունկը տխուր յոգեբով փոթորիկեցաւ։ Վայրկեանը անաւոր է, կամ պէտք էր մեռնիլ, և կամ պէտք էր ապրիլ։ Ո՛րքան անուշ է հոգին։ Խեղճ ծերուկը կեանքի հրապոյրէն, թոռանը ու զաւկին անշիջելի սէրէն յաղթուած՝ տախանդի աշխատութիւններու ենթարկալիլ յանձն առած էր։ Բայց ափսոս, մը քանի օր աշխատելէ վերջ յուսահատ իր անկարողութենէն, ստիպուեցաւ դադարեցնել իր գործը, սակայն դրամը, հայի ու գեղի պէտքը օրէ օր կ'աւելնար։

Հարսին ու թոռանը հիւանդութիւնը ծանրացած էր։ Բժիշկ, դեղ, կերակուր պէտք էր։ Հիւանդներուն սնարին մօտ նստած ի գմբ կը մխիթարէր զանոնք։ Լոկ մխիթարական խօսքերը ինչ ազդե-

ցութիւն ունին» Պիտի մեռնին անօթի, վերջին օգնութիւն մ'ըն ալ, ճիգ մըն ալ պէտք է ընել, մեղք են...» Հեկեկայ լռիկ ու յուսադրական խօսքերէ վերջ դուրս ելաւ մանաւանդ սենեակէն: Ձեռք կարկառելու գաղափարը վերջապէս ընդունած էր և ուրիշ ի՞նչ միջոց կար խեղճ ծերուկին մօտալէն, օգնութիւն ազերսելն զատ:

Ողորմելի՛ արտաքին, ամօթանար, կթոտ քաղերսով, դողդոջուն դուռնէ դուռ, փողոցէ փողոց կը պտտէր, ծանօթներուն ձեռք կը կարկառէր ողորմութիւն, օգնութիւն ազերսելով: Իսկ անդին չէք կենք նստած անկողին մէջ յուսանաւորէպի դուռը կը նայի կարօտի տխուր նայուածքով: Կը մտածէ երկար, կը հառաջէ, կը սոսկայ երբ կը մտաբերէ մանուսն անաւորութիւնը, որուն մօայլ ուրուականը կարծես կը նշմարէ հագւոյ աչքերով, ու կը հակի մայրական սուրբ գորովով մը սրտանատուրէն վրայ, որ ծաղկախոտէ կը առուապի:

Մայր և որդի՛ մտածկոտ, խոնարհ, աստուածային գեղեցկութեամբ օժտուած, ո՛րչնչափ շնորհալի են, որ մարդ իր առաջին ակնարկով: անմեղութեան մարմնացումը տեսնել կը կարծէ անոնց մէջ: Պահ մը այսպէս մնալէ վերջ, մայրը ըզգուշութեամբ անկողին կը դնէ չէք մանուկը ու խանդավառաբար անոր վրայ կը հակի: Այժմ ակնարկներ կը փոխանցեն, որոնց մէջ, չէք թշուառներ, երջանկութեան ու գոհունակութեան բոցավառ սիրոյ կայծեր կը պոպոկային կարծես: Ու մտածած ծիւրոյց ցաւերու, գալարումներն ու ճիւղեր հանգարտ ժողովներ կը ցոյան մօր ու որդւոյն ամոյն դէմքերուն վրայ: Անոնք երջանիկ էին և կը կարծէին թէ աստուածային սուրբ խորհրդի մը շնորհիւ ազատած էին: Հէք մայրը ուզէր աղօթել ու կանգնելու դի-

Ամասիա

տումով չարժեալ, եղիւկ որ ցաւը նորէն զգեսնեց զայն անաւոր գալարումներով, որուն բնկերացաւ խեղճ մանուկին սրտակեղեք ճիւղ:

Մանուկը կույար, կ'ազաղակէր ողբաձայն, իսկ մայրը, անտանելի՛ ցաւերով կը գալարէր, գետնէ գետին զարնելով ինքզինքը: Սենեակը տանջանքի ու ցաւապանքի աներեակայելի վայրն էր: Գեղջկատեսիլ սենեակին ինչ սպասներն ու պատերը տխուր ակնատեսը կ'ըլլային անաւոր տեսարանին և որոնք կարծես հոգի առած մերթ ընդ մերթ արձագանգ կուտային յալազին հառաչանքներով:

Սրտածմելի ու մանաւոր վայրկեանները անցած են: Մայր ու որդի սոստիկ տենդի մը մէջ կը խորդան յուսանաւորական հունդընով մը: Մանուկին դալկահար դէմքին վրայ արդարութիւնն ու անմեղութիւնը կը պոսկերոտնար, իսկ իր աչքերուն նուաղկոտ ու խորքաւոր նայուածքին մէջ կ'արտայայտուէ թշուառ ու մանացու կայութիւնը: Մահամերձ կենք ալ մտածած սրտանատուր, յուսանաւորութեան ծայր ստոյճան հասած, պաղատագին զգնութեան օրնատական ակնարկներ կը նետէ հոս նն: Ու այս ահաւոր տեսարանին առջև կարծես խրճիթին ինչ գոյքերը գութի եկած, վրդավուն երկոյթով մը, օգնե ու անկարող, արձանացած լռիկ կ'արտատուեն խղճաւով, աստուապաշտ էակներու վրայ:

Ամէն ինչ վերջացած է: Գայարուղ հագիները իրենց վերջին օթեանը հասած էին: Իսկ ծերուկը՝ թշուառ, դեռ կը պտտէր երկա՛ր երկա՛ր թշուառութեան մօայլ ու դաժան հորիզոնին տակ, օգնութիւն մը, ողորմութիւն մը ազերսելով անոնցմէ՝ որոնք միայն կեղեքել զխոն:

Ինչ դառն կեանք, սրբան անտանելի կացութիւն...:

ՍԵՐՈՒՄԷ ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

ԳԱԻԱՌԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՐԶՈՒՍՆԷՆ

Ամսոյս ճին քաղաքս եկաւ Միացեալի վարժարաններուն ընդհանուր տեսուչ՝ Բրոֆ. Մ. Մինասեան. նոյն իրիկունը Անաթոլիա գոյէճի սրահին մէջ խօսեցաւ զաստիարակութեան ամենէն կենսական հարցերուն վրայ. հետեւեալ օրը Անգլիկերէն երկու բանախօսութիւններ ևս տուաւ դպրոցներու և ուսուցիչներու վերաբերող խիստ լուրջ խնդիրներու նկատմամբ. երրորդ օրը աշակերտ Ազգ. երկսեռ վարժարանները, զոտ զոտ իր խրախուսական թերադրութիւններն ու աշակերտութեան վերաբերող ժամանակակից պայմանները յայտնելով. կէսօրէն ետք՝ ժամը 4ին (բ. ե.) գոյէճի սրահին մէջ խօսեցաւ ցնցող ատենադատութիւն մը, նիւթ ունենալով «Կոսմէ եւ Գիւլքիւն», և այնքան հիմնադրօրէն պարզեց ատենյա քարաւերութիւններն ու համաձայնութեան եզրերը, զուտ գիտական հայեցողութեանց վրայ կախած: Իրիկունը ժամը 7ին (բ. ե.) խօսեցաւ Ազգ. վարժարանի սրահին մէջ երկուսն անօրինակ բազմութեան մը առջև, նիւթ ունենալով «Մեր վարժարաններու բարեկարգութեան նիւթական պայմանները»: Յարգելի Բրոֆէսորը մտաւ բուն վերջին վրայ դնելով, երեք եւկան պայմաններ ցոյց տուաւ մեր վարժարանները ճշմարիտ վարժադան ճամբուն մէջ դնելու համար. 1.— Վարժապետանոցի մը անհրաժեշտ քէտքը, զոնէ 5 վարժապետանոց առայժմ բաւ համարելով մեր թրքանոյսցս կեանքին համար. 2.— Ուսուցչութեան դիրքը և նիւթական վիճակը բարձրացնել. 3.— Վարժարաններու ներքին անկախութիւնը ապահովել: Համակրելի Բրոֆէսորը սրբան սիրուն՝ իր գրչով, նոյնքան և աւելի նրապուրիչ ու խորունկ ապուստրութիւն մը թողուց իր լեզուով

բոլորին վրայ, և երեք օր անընդհատ յոգնելով մեկնեցաւ Պոլս:

Մարգուանցիներու համար հազուադէպ ու թանկագին պատենութիւն մը եղաւ Բրոֆ. Մինասեանի ներկայութիւնը, և մեծ բարեւադրութիւն մը՝ լսել այսպիսի հեղինակութեան մը կողմէ արտայայտուած այնքան անկեղծ ու ծանրակշիռ գաղափարները մեր կրթական կոնստահարցերուն շուրջ: Երանք՝ թէ արձագանգ գտնէին իր բոլոր բաժնէրը ամեն կողմ, և օր առաջ սկսէինք մեր ազգային վերածնութեան ոգրագան գործին:

Գարձեալ ամսոյս 12ին կրթակի օր ժողովրդական լսարանի օրակարգը արուեցաւ Մարգուանի իգական սեռին, որ իր բաժինը կատարեց խիստ գնահատելի կերպով:

Երկուսն խառն հանդիսականներու առջև օրակարգը չափուեցաւ գեղեցիկ երգով մը, և հետզհետէ քեմ հրաշքուեղան՝ 1. Օր. Գարանիճայ ժամկոչեա՝ Ման. 2. » Ազնիւ Գուլուճեան՝ Մեր սեռին զարթոնք. 3. Օր. Նուարդ Աթէշեան՝ Հայր Աստուծուն. 4. Օր. Ազնիւ Գարաւքիւլեան՝ Ինչո՞ւ կ'ապրինք. 5. Օր. Արուսեակ Ներսէսեան՝ գրթ. Սիջաւալար. 6. Օր. Մարիամ Տիվանեան՝ Կանանց զարթուել:

Վերոյիշեալ օրերգները նախ ուժգին կերպով բողբոխ և արգար պայրոյթի արտայայտութիւններ իրեն բոնասպասական ամեն տեսակ կարգերու դէմ, և ապա փայլուն կոչեր տուին այն իգական սեռին որ ճշմարիտ դերն գիտակցելով, ալ ատպարեզ գայ իր գործելու և իր բաժին պարտականութիւնը կատարելու ժամանակակից պէտքերուն և պահանջներուն առջև, յանուն Հայկական Վերածնութեան:

ԱԻԵՏՈՒՆԻ

ՍԱՄՍՈՆ

Սամսոնը մէջ օրուան հրատապ խնդիրներէն մին ալ, առաջնորդի ընտրութիւնն է: Երեսփոխանական ժողովը այս մասին եզոտարարութեան չի կրնար գայ, ոմանք Համագաղայ վարդապետը, ուրիշներ Գնէլ վրդ. Գալէմբէրեանը կ'ուզեն ընտրել:

Օտմ. երես. ժողովի համար թատրաքի էֆ. կարող անձի մը թեկնածութիւնը դրուած է, ոմանք ալ Սիմոնաքի էֆ. թեկնածութիւնը դնել կ'ուզեն:

Էրզրաւայէն մեր թղթակիցը կը գրէ. — «Տեղւոյս Ազգ. վարժարանները երեսի վրայ կը մնան հոգաբարձութեան չգոյութեան պատճառաւ. կարծեմ նոր թաղականութիւնը մատգիր չէ վարժարանները նոր ութերու յանձնել: Մինչ ժողովուրդը կ'ակնկալէ որ քիչ մը ուշադրութեւն դարձնէ դէպի կրթական վեհ գործը»:

Գարձեալ Էրզրաւէն ուրիշ թղթակից մը Թիւֆէնկէան էֆ. կ'ենթ մահուան պարագան գրելով, թաղումէն վերջ, Տեղւոյն տէր Սուրէն քահանայի և ուրիշ երէք անձերու կողմէ գիտկը գերեզմանէն հանուելով, անոր մատի թանկագին մատանին և արժէքաւոր հագուստը գողցուլը կը տեղեկայնէ: Թիւֆէնկէան էֆէնաթի մեր ցաւակցութիւնները յայտնելով, այս մասին լուսաբանութիւններու կ'սպասենք:

ՍԵՐ ԲՈՂՈՐԸ ԵՒ ՄՍԶԱՆՁԸ

Նոր սերունդի վերագործումը մաշուց արգէն սկսած է խռովել կարգ մը ունայնամիտներու և կուսակցամիտներու քուեր. այդպիսի հայածանք մը ևս ծայր տուած է Նոս Իզմիրթի Սօսիալ աւիժակրատ Հնչակ. Ուսանողութեան դէմ:

Մենք կուգանք խոստարարելու, որ մեր մշակութիւնը ու միայն քաղաքական յագնեցութիւն միջնորդաւն հետեւ կը պահէ ինքզինքը, այլ և ամէն կերպ կ'աշխատի գի-

տական և հասարակագիտական ուղղութիւններով զարգացնել իր անդամներու միաքր:

Ինչ կ'ուզէիք մեզմէ, Պ. Ահարոններ, ինչո՞ւ ի դուր տեղ ձեր խաղաղ օւնը վրդովեա էք ու ձեր հատակ պոռձուն: Ութեամբ ամբողջ էութեամբ կ'աշխատիք մեզ ոչնչացնել. դուք երբէք իրաւասութիւնը չունիք վարժարանի սեմէն ներս հակակուսակցական վարեկողութիւն ցոյց տայու: Դուք ձեր հակահրնչական էնտրիքներովը աւելի կը գրգռէք մատաղ սերունդը և կը մղէք զան զէպի կուսակցական պայքարը՝ որուն մէջ ուսանողներս երբեք զանհարգներ չենք:

Մեր միակ հպատակն է արժեւորել մեր բնկերներու մէջ յառաջդիմութեան տենչը:

Նկատելով որ մեր այս մաքուր և վրսեմ նպատակին դուք, Պ. Ահարոն, կուգաք ամէն գնով խոչնդոտ յարուցանելու, ուստի կ'առաջարկենք հագաւարձութեան որ' 1. — Դպրոցը կուսակցական եռիւնեք գերծ պահելու համար հանդէս գայ՝ արգիւելու Պ. Ահարոններու նման «նեղծ» ազատականութեան քաղին տակ մտած ուսուցիչներու հակամանկաւարական ջանքեր: 2. — Կուգանք մեր խռովին նազկանքը յայտնելու Ս. Գ. Հնչ. Ուսանողութեան դէմ հանուած հասարակական և անոնց գրգռներուն դէմ:

Ս. Գ. ՀՆՁԱԿԵԱՆ.

ԻԶՄԻԹԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻԻՆ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԼՍԱՐԱՆ

Ամառս հին Ս. Գ. Հնչակեան Դիւլպին մէջ թերթին աշխատակիցներէն բնիկ Մարգուանցի Տեառ Թաղէս ժամկտեան «Կամ մահ կամ վերածնունդի» նիւթին վրայ 2 ժամ տեղ գեղեցիկ յոռնախոսութիւն մը բրաւ: Մենախոսեց ԲՈՂՈՐԸ նիւթին վրայ Պր. Յովսէփ Եարարմ գեղեցիկօրէն:

ԹԱՏԵՐԱԿԱՆ՝

Ամսոյս 14ին տեղւոյս Ազգ. Ազջ. Գեղ-
ցոնական վարժարանի մէջ Ս. Դ. Հնչ.
Թատերախումբի կիներու համար գեղե-
ցիկ առիթ մը ընծայելով՝ միայն կոնանց
համար ներկայացուց «ՎԱՐԴ ԵՒ ՇՈՒ-
ՇԱՆԸ»։ Վարդի դերը կը կատարէր՝ Յ.
Եարտմ. Սահակինը՝ Ն. Ամբասան.
Շուշանինը՝ Գ. Ամբասան. Գէորգինը՝
Գ. Պալտանի. Յակոբինը՝ Յ. Կէօնէրեան.
Յամբիկինը՝ Ա. Պաշտեման. և Սիմո-
նինը՝ Հ. Սողազեան։ Ամէն ալ շատ
գեղեիկ ու յաւ կատարեցին իրենց դե-
րերը։ Կը գովենք իրենց յաջողութիւնը։
Ս. Դ.

ԱԶԳԱՅԻՆ

Պատ. Բաղաքական Ժողովն իր մեծա-
մասնութիւնը վերադադար, իր բացակայ
անգամին՝ Փափագեան էֆ.ի Սերաստիա-
էն վերադառնալով։

Ուսումնական խորհուրդը իր մեծամաս-
նութիւնը կորսնցնելով կազմալուծուե-
ցաւ։

Նորրեմբ Թաղ. խորհուրդն իր գիւա-
նը ընտրելով գործի ձեռնարկեց։ Կը
յուսամք թէ յուրջ ու անկողմնակալ
գործունէութիւն մը ցոյց տալ կը ջանայ
դէպի ազգային շահերը։

Ս. Յակոբ վարժարանին դաստիարակը՝
Պրն. Մարտիրոս Արմաղանեան, Զօրումի
«մէքթէպի իստաթի»ին Ֆրանսերինի ու-
սուղից կոչուելուն վրայ, իր պայմանա-
գրութիւնն ու խոստումներն առանց նը-
կատի առնելու, իր պաշտօնը կիսատ թու-
ղելով մեկնեցաւ անցեալ շաբթու։

Վսեմ. Միւթէսարրֆ Անմէտ Մաճիա
պէյ գաւառները շրջանի ելած է. կ'իմա-
նանք թէ իր այդեկած տեղերը բանախօ-
սութիւններ կ'ընէ եղբւր երեսփոխանական
ընտրութիւններու մասին։

ԺԱՄԱՆՈՒՄ

Ամսոյս 18ին տեղս Ժամանեց Անաթո-
լիա գողէճ. փոխ նախագահ Տ. Զուայթ

իր ընտանեօք, և տեղւոյս Հայ։ Աւետ.
եկեղեցւոյ հովուի պակասը լրացնելով,
իր տեղը վերադարձաւ։

ԱԴԵԻՏՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ

Մարօքի կնճիռէն և Խաղական պատե-
րագմի սկզբնաւորութենէն ի վեր, առե-
արական հրապարակը որոշ չարժու մը
ցոյց չի տուաւ։ Վաճառականութիւնը
անորոշ կացութիւն մ'ունի, ամէն ոք
կ'զգուշանայ իր գործառնութիւններու
շրջանակը ընդլայնելու, վախճալով թէ
ինքզինքը անակնկալներու առջև կը
գտնէ յանկարծ և իր տարբերութեան աշխա-
տութեամբ չիսած գիրքը կը կորսնցնէ։
Իցիւ թէ չաւտով վերջ գտնէր այս վի-
ճակը։

Օգերը նպատաւոր են, այգիներու
աշխատութիւնը ելած է։ Թէ այգիներու
գործերուն և թէ շօնէներու ու երկա-
թուղիներու ճամբաներու շինութեան
պատճառէն բանուորներու օրավարձերը
տակաւ կը բարդուին։

ՎԵՐՋԻՆ ՊԱՀՈՒՆ ԳՈՒՍԱՆՆԵՐԷ ԸՄ-
ՏԱՑՈՒԱԾ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կիրառանէն կը գրեն. — Փետր. 3ին
տեղւոյս Ս. Դ. Հնչակեան Թատերախում-
բայ խումբը «Անմահն ժիրաջը կամ Մեծ
յեղափոխականը» ներկայացուց մեծ յա-
ջողութեամբ, այնպէս որ թէ դերը և թէ
դերակատարները խառն բազմութեան
կողմէ բուռն ու յարատե ծափերով գը-
նահատուեցաւ։ Այդ խումբը մտադիր է
ի'նպատակ վարժարաններու ալ մէկ ան-
գամ ներկայացնել։ Նոյն կուսակիւ-
թիւնը գիւղը վարժարան մըն ալ բացած
է և հոգալին հարկին մեծ ոյժ կուտայ։

Հէրէկէն կը գրեն. — Ասիէ ամիսներ
առաջ նիքոսարի և էրպա'այի շրջակայները
շրջող հէքիմ օլլա լուռած նշանաւոր
առաջակը հետապնդելու համար գաղղ
ոտական զինուորներէն՝ Հուրի չափուշ,
որոր փախչելէն վերջ «Իսկիի» յոյն գիւ-
ղս վերադառնալով նոյն գիւղերը մինչև

գիւղացիներու շատ մը նեղութիւն տալէ վերջ կ'սկսի կին խաղցնել, գիւղական նուագով միասին. Յնվր. 23ին ալ նորէն նոյն գիւղը երթալով կրկին միենոյն գերին մէջ կը գտնուի միայն այս անգամ ստուգուած չէ կին կար թէ ոչ. վերջապէս այս մարդը կատարեալ փորձանք մ'է թէ հոս և թէ չըլակայ գիւղերուն:

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՕԿՐԱՏ

ՀՆԶ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԵՒ

ԻԹԻԼԱՖԻ

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԷՆԸ

Յօդ. 1.— Օսմանեան պետութեան վարչութեան ներքե ժողովրդապետական սկզբունքները պիտի պաշտպանուին:

Յօդ. 2.— Օսմանեան պետութեան ամբողջականութիւնը և Սահմանադրութեան պաշտպանութիւնը փոխադարձ զանկութիւն ըլլալով, պետութիւնէն անջատուելու ամէն ձգտում և հակասահմանադրական ամէն շարժում խստիւ կը մերժուի:

Յօդ. 3.— Օսմանեան պետութեան քաղկացուցիչ ազգութիւններու քաղաքական իրաւունքները ամբողջութեամբ պիտի պաշտպանուին և բոլորովին կը սերտուի մէկ ազգի քաղաքականապէս ստորադասումը միւսին:

Յօդ. 4.— Հայոց Պատրիարքարանի հսուցի վեր ունեցած առանձնաշնորհումներու ամբողջութեամբ պաշտպանելը որոշուած է: Հայ ազգի միջոցով կառավարուող դպրոցները պիտի շարունակուին կառավարուիլ Պատրիարքարան:

նի և անոր ենթակա մարմիններու կողմէ, ու այս դրութիւնը ամբողջութեամբ պաշտպանուելով հանդերձ, սոյն դպրոցներէն արուած վկայականները համազօր պիտի համարուին պետական նոյնաստիճանի դպրոցներու կողմէ արուած վկայականներուն:

Յօդ. 5.— Բանուորի, հողազուրկ գիւղացիի, մարապաի (օրթաղճի, հարրճի, այլլղճի) վիճակը բարձրագոյն քննարկ պիտի դրուին:

Յօդ. 6.— Բանադրուած հողերու և կալուածներու դատերը բոլորին լիարժեք իրաւունքով իրենց իսկական տէրերուն պիտի վերադարձուին:

Յօդ. 7.— Գաղթականները, տաճիկ տեղացիներու սեփականութեան իրաւունքին վնասելու, պետական թափուր հողերու վրայ պիտի բնակեցուցուին:

Յօդ. 8.— Վերոյիշեալ յօդուածներու վրայ իթիլաֆի և Ս. Գ. Հնչակեան կուսակցութիւնները համաձայնած ըլլալով, 1912ի (1327) ընտրութեանց ատեն և ողորդարարներն մէջ համադարձակ յիշու որոշում տուած են:

Իթիլաֆի կուսակցութեան

ընդհ. կեդրոնի կողմէ

ՍԱՏԸԳ

Մ. ՀԻՐ

Սօյիալ դեմոկրատ Հնչ. կուսակցութեան
լիազօրնէր

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻԻԼԵԵՆ Բ. ՎԵՐԵՋԴԱՏ

7 Փետր. 1912

Արսունսկի ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱՊԻՆԵԱՆ
ԽՈՐԱԳՐԱԿԵՍ՝ ՄԻՆԱՍ ԻՓԷԲՃԵԱՆ
Տպագր. ՅՈՎՆԱՆԵԱՆ ԵՒ ԵԱՐՏԸՄԵԱՆ

و وظائف اسانی

« سن شرفی تعقیب ایتسه شرف

سنی تعقیب ایتسون »

سا ۱۴ شباط سنه ۳۲۷ امامیه

علکسانظر نصایبان

تکذیب

بر طاقم بنی اسرائیل حکایه‌لری اوکر نمکله
 علماسلک جلیله داخل اولدینی ادعای واهیسنده
 یونسان برینک ؛ ملت اسلامیه جه پک احترام بر
 ذات عالییه عادتا اسناد بوللو نقل ایتدیکی بر
 افسانه‌نی « بوکا بر طاقم یلانچی دوزمه‌سی - لرلر »
 دیه رد ایتشدم . شو سوزمی - « قرآن کرم -
 حاشا - « عجم دوزمه‌سی » طرزنده اشاعه و حتی
 دینسزالکمه دائر استفتایله ایندیکی ایشدیکمدن
 اغراض شخصیه‌نی ایلری کوتورمک ایچون هر
 کسه دین پرده‌سی اتنده هجوم ایتکی شرف (!)
 عد ایدن ، فقط دهامنوز ابویه اطاعتی اوکره
 نه‌مین مومی‌الیهک شو اشاعه‌نی تکذیب ایدرم .
 عجباً « مقنن اجزاء شریفی چکینه‌دیور » ارا-
 حیفنه نظیره‌می یابیله‌جق ؟

چوروم استثنائی معلملرتدن

اسماعیل شوقی

اماسیه غزالیه‌نین مدیریت علییه‌سنه

مدیر محترم :

بالاده‌کی تکذیبتامه‌می لطفاً سوکیلی منادی‌کوزک بر
 طرفنه صقشدر مگری رجا ایدرم . اسماعیل شوقی

ایدوب درعه‌ده ایده‌جکی وظائفی تمامیه اجرایی
 ضمانتده کندوسنده اقتدار کوریور ، قولیده
 قلبیه موافق‌سه حلال اولسون ، یوق اگر مبعوث
 نامیه استمه‌ار ایتک ارزوسنده ایشه بو مقوله‌صا
 حب وجدان مؤکلمره ارتق اهدا اولسه‌جق
 صفات ! توقیل ایدلره متواقفدر .

صرف شرف شخصیه‌نی تعقیب ایدن کسه‌ده
 حمیت ، اخلاق ، حس وطن کورله‌من ایتک کوز
 لرنی تکبر استیلاء ایتشدر ، عنددنه وطن ، عزت
 نفس ، حقوق ، عدالت اخوت لا حکمنده‌در .
 آرزویی یکنه‌سی نائل الطافات ، کسب شهرت
 ایتکدر . غداردر چونکه عادل بر مبعوثه‌شا
 یسته صندلیانی ضبط ایدرک مؤک اولدینی وطن
 داشلرینک حقوقنی تجاوز و ابطال ایدوب وطن
 معزیزنه خیانت ایتشدر . شرفی کندی تعقیب
 ایتیوب شرف کندوسی تعقیب ایدن بر وطندا-
 شده غلوت عفت ، اخلاق حسنه و اوصاف
 مستحسنه ایله مشحون بر قلب کوریلیر . اطوار و
 افعالی نمونه ادبیت ، امل و عملی وطنک تعال-
 لیسنه منحصردر . تفکرات و تشبثاتی شاه راه
 ترقی‌در . بر سوزله انسان کاملدر . ایشه اخلاقی
 اجتماعی حیاتمزه الزم اولان اوصاف . باق ، شو
 فعال عثمانلیه . شرفی ترک ایتش وطننه ، دولته ،
 همجنسینه بحق ایضای خدمت ایدیور ، معدود-
 ننده‌کی تحقیر ایتیوب معفو‌کنده‌کینه‌ده - سید ایتیور
 هر فردک حقوقی ناموسی نظارنده مساوی ،
 تفریق تفرق روحی ذرتما کورله‌میور مظلومک
 حامیسی ، مغدورک بانیسیدر ایشه اوصاف حمیده

۵

سکا کوزل بر درس یاوروم
مظلومره چوقدر ظلوم
چفت و چیق تولا تپان
بکیره در یافیشان

۷

هانی زده شول مسوات
آه حکم ایله سه عدالت
ایشته اول زمان کائنات
ایمز لر اصلا شکایت

۶

چالیشان رنجبر دائما
یم اولیور اغناییه
هر کیمه ایتسک شکوا
ایشدیلز سسک بیه

۸

البت بر کون کلیر اول کون
حکمی قالمز زنگینلرک
فقیر زنگین هرکس بتون
قرداش اولور یکدیگرک

اماسیه ۱۳ شباط سنه ۳۲۷

اسکندر نهمی

« سن شرقی تعقیب ایتسه شرف سنی تعقیب ایتسون »

شرکت بشریتده هر فرد مالک اولدینی لیا-
قت و حائر بولندینی خصائصی دائره سنده بر
موقع احرازینه عامل اولوب مطلوبی موقعیه نا-
ثلیتی کندوسنه بر شرف عد ایدر . حس شرف
درون انسانده محرک بر قوتدر . اوصاف انسانیه
دن اولان شو حس طبیعی سایه سنده بشر بعضاً
شرقی بر طرف ایدوب همجنسبه مد ید ایتش ،
حقوقی وقایه و وظائف مکلفه انسانیه سنی بحق
ایضا ایتش فی اما دیگر بر قسم اعظمی تشرف
ایتمک ارزوسيله غدر ، ظلم ، بغض ، وحشته تأثر و
نفوذ یشلتمش انحق و انحق شرفلنمک ارزوسنه
واصل اولق ایچون ، کرچه اشبو شرف ارزو-
سی موجودسه لکن بری عموم بشریتک تشر-
فیه مشرف اولور دیسکری ایسه شرف ذاتیه سنی
تعقیبیه تلذذ ایدر :

ظالم نeron ، غدار عبدالحمید زمان سلطه-
نترلنده طریق صداقتدن عدولبله وطن و اهال-
لینک شرف سعادت و استقبالی تأمین استرحام-
تی اسعاف ایتمک کسب شان و اجلال ایده جک
کن ذمام اداره بی بد تصرفلرینه الوب حقوق اها-
لیسی ضبط و تسخیر ایدرک وطنی خراب و بیاب
توابعینک خانداتی طایمار ایتمک تشرف ایتش
در فقط اول مغدور اهالی کمال رذالته انلری
تحصنکاهلرندن طرد و تبعید ایتشدرد .

احوال سیاسیمزده شرف تعقیب ایدن بر
زمره اشخاص رعنا مشاهده ایدیورز انظار-
لری پارلامنتو صندلارینه و نظارت مقاماته
معاطوفدر ، اطرافزی احاطه ایدن نامزدیلر
میاشنده حیتی وطنپرور بر عثمانی وجدانک صدا
سنی استماع و حکمنه اتباعاً کندوسنی تقدیم

بونی بر وظیفه اوله‌رق قبول ایتمش اولان اون‌بش یکریمی هم فکر. هم تحصیل ارق‌دش اراسنده. جمله‌سنگ بر کتله تشکیل ایتیمی، جمله‌سنگ بر برینه قارشو اختلاف شکانده اولان قانونلرینه و دماغلرینه قاریشان پوروزلری آییقلامه‌سی، تمیزلامه‌سی، بتون حسلرینی، فکرلرینی قلملرینی برلشدیر- مسی لازم ایکن — ینه از چوق اختلافلر، اغبرارلر، احتراصلر ظاهر اولدیفنی کورییورز .

باخصوص — اک جان اله‌جق نقطه بودر — وظیفه دیه قبول ایدلمش اولان بر سمیه قارشو لاقید و مسامحه‌کار طاوارغق مرض اجتماعیسنگ از چوق بونلر اراسنده‌ده ظاهر اولدیفنی مشاهده ایلیورز .

ایشته امراض اجتماعیه‌مزدن بری، امنیتسزلیک و قابلیتسزلیک، حس وظیفه‌ده قدرتسزلیک، قیدسزلیک ... اتحاد ایتک ایستیورز، ائتلافه چالیشیورز، فقط ابتدا هر فردیمز، اطرافزده، محیط مزده بولناقلرله اتحاد و ائتلاف ایدلم، امنیتسزلیک و احتراصه مغلوبیت مرض اجتماعیسندن کنديزی قورتادلم، وظیفه اوله‌رق درعه‌ده ایستدیکمز افعال و حرکاته — ولوکه بر دوستی بر صباح معین زمانده یارم ساعت کورمک ایچون ویرلمش بر سوز اولسون — مقید اوله‌لم، بونی، وظیفه‌یی مقدس طامق حسیله تلقی ایدلم ... عمومی بر ضرورته سویلیک ایستدیکمز شودر :

امراض اجتماعیه‌مزی اییجه تشخیص ایدوب هر شیدن اول بونلرک تدایسنه چالشمزسدف ایله‌وله‌یمیز. کیری کیری کیدرز .

ترقی‌یه دکل بوسبتون ندنی و سفالته دوشرز .

چوروم

عاشق زینل

فقیر بر خانه

۳

آنا نه اولور عجب
قالقوب کیدسک شو زنکینه
اغلایه‌رق ایتسک رجا
عاریت ویرسه بر ایرا

۴

ترلاسنده بن بو یازین
تمام اونوز کون چالیشده
بورجکزه تسلیم قویدم
دیه صاودی بوش اول زنکین

— ۱ —

بوکسک بوکسک قارلی طاغیر
دیننده بر کلبه‌جق
دروننده چولوق چوجق
چیری چیللق آج قالمش

۲

قارشوده بر قوجه قوتاق
اوطه‌لری پک سیجاق
کایلار مغازه اوجاق بوجاق
طولدرمشلر چوق ییه‌جک

امانتیه

مشره منادیسی

نومرو ۹

شباط ۱۵ سنه ۳۲۷

برنجی سنه

التنجی نسخهدن مابعد

امراض اجتماعیه

عیناً بونک کبی بر ملت اراسنده بر طاقم امراض اجتماعیه میدان الیر و بونلر افراد ملت ارا-
سندہ طبیعت و اعیاد حکمنہ کیرر، افراد ملتی تأثری آئندہ آزر، بوزر، ترقیات و تکملاتہ قابلیت
سز، سفالتہ محکوم بر حالہ بر اقایر .

اتحاد بزی قورتارہ جق، بو مملکتک بو ملتک سعادتی، استقبالی عناصر مختلفہ عثمانیہ نک حسیات
و تمالاتہ، قابلیتہ، استمدادینہ کورہ ارالندہ حصولہ کتوریلجک اولان شرط رابطہ اتحاد
در فقط بو امینہ واصل اوله یلمک ایچون یالکر شدتلی بر ارزو کافی دکل . بر کرہ کندی کند
یمزی اولچوب بیچہلم . عییا بزی بو قابلیتدن آلیقویان قصورلیمز، خطالیمز، اجتماعی مرضلیمز
وارمی ؟.. اولدیغندہ شبہه یوق، ایکی مختلف عناصر عثمانی بی بری بریلہ مقایسہ ایدرک بونلر ارا-
سندہ کی حسیات متقابلہ اتحادجویانہ و ائتلاف پرورانی ده ارامیلم، دها محدودہ یک محدود و
دائرہ داخلندہ تدقیقائیمزی اجرا ایلہ بر حکم چیقارمغه و صکرہ بو حکمی تعمیم ایلکک چالیشہلم .

مثلاً بر مکتب عالیدن چیقمش، عینی تحصیلی کورمش 'ولان، عینی افکار و حسیات ایلہ مشحون
اولملری لازم کلنلردن بر هیئت تشکل ایتدیکی فرض ایدہلم... بر کیمسہ نک جیشیتی رنجیدہ ایتک
فکر و نیتی قطعاً بزده یوق . انجق بر حقیقتی تصدیق و اعتراف یولندہ دیہیلر زک: بونلر اراسندہ
اتحاد تام بولوق و ترقیات و تکملاتہ بر ملتی سوق ایدہجک مؤثراتک اک مهملرندن بری اولان
معاونت متقابلہ و معملہ متحدانہ کورمک بزہ یک کوجدر .

شو حالہ مدھش بر مرض اجتماعی صورتندہ ارامزده حکم سورمکده در . ملتک سعادتنہ ،
سلامتنہ چالشمق و بر امل خیرہ زمانلرینک ، فکرلرینک بر قسمی حصر ایلکک تشبندہ بولمش و

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱՊԻՊԵԱՆ Ա.Մ.Ա.ՍԻԱ.

Ոսկի գորուն եւ պրիճ նաեւ սեյխ-
ջոյս արհեստական ասամներ շինելու
մեքիկեան մեքոսը սորվիլ ուզող
բոլոր ասամաբոյժներու կը յայ-
տարաւ թէ ինք պատրաստ է այդ
մեքոսը սորվեցնել նպատակաւոր
պայմաններով:

سیغورطه جی

سیمون فارقیان

آماسیه

آلیانسه عمر سیغورطه سی لانقاشه حرم
سیغورطه قومپانیهلرینک اجنتی در.

مناسب شرائطله هر نوع سیغه . طه ایشوری
یاپار. آرزو ایدنلر بر دفعه تجربه ایتسونلر

چیشیان ارتین انا دکانک اتصلندم باغمانی
۵۰ (الی) پارهیه معدن گوری صاتیور.

هر کس فرصتدن استفاده ایتسون.

ՓՈՒԹԱՑԷՔ ԱՆՄԻՋԱՊԵՍ ԴԻՄԵԼ

ԿԱՐԱՊԵՏ ԱՅՎԱԶԵԱՆ
Զ Ի Ն Ա Վ Ա Ճ Ա Ռ Ա Ն Ո Յ Ը
ԲՍ.Լ.ԸԳ. "ԱՇԸ—ՍԱՄՍՈՆ"

Կը վաճառե ամեն կարգի ու ամեն տե-
սակ փամփուլոս 0 | 25 գեղջով: Թող դի-
մեն, բոլոր առիթեն օգտուիլ գիտցողները
վստահ ըլլալով թէ իրենց շահը նկատի պի-
տի առնուի միւս: Մն փորձեցեք եւ հա-
մոզուեցեք:

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

طشره اجنتلریمز

Մարզուման.- Տիար Անդրանիկ Գլխեան

نحیرات مدیری محمد رفعت بك چوروم

Զօրում.- Արժ. Տ. Անանիա Քնյ. Տիվանեան
Վեգիր Քեօփրիւ.- Տիրք. Յովսէփ Քիրենեան
եւ Գ. Սեօղեմեզեան

قومیسر حافظ افندی .- سیواس

Սիվազ.- Տիար Արամ Ակինեան

Պաֆրա.- « Նեան Շիրինեան

Պէյրուք.- « Կարապետ Սափրիչեան

Սամսոն.- « Վահան Աճաճանեան

Զարեամպայ.- Տիար Միհրան Բուսեան

Զիլե.- Տիար Մանուկ Թօբալեան

Տրապիզոն.- Տիար Սեփան Պալեօզեան

Միւմ-հանի գիւղ « Սեդրազ Համալեան

Սոնկուրլու.- « Հաւեդ Սեվսեան

Զարա.- Տիար Կրայ. Ասաճուրեան

Կարին.- « Հայկ Մանկասարեան

Քղի.- « Մարտիրոս Սրապեան

Մուշ.- « Հայկ Միրինեանեան

Օրսու.- « Սեփան Գասապեան

Բալու.- « Արժ.Տ. Սուրեն Քնյ. Տերեան

Թոգաս.- « Մկրտիչ Մեհեմեան

Հերեկ.- « Կայծակ Գարազաբեան

Նիկիսար.- « Սեփան Քեօբեան

Կ. Պոլիս.- « Յակոբ Աւետիսեան

« « Հմայակ Արամեանց

Կիրասոն.- « Անտոն Սովունեան

Կեսարիա.- Տիար Միհրա Միհասեան

Գաւթեմոնի.- « Յար. Փափազեան

« « Աղեֆ. Կիւլպենկեան

Եղզլաս.- « Բարսեղ Մերունեան

Արաբկեր.- « Միհրան Ալըպաբեան

Պալքեսիր.- « Անուշահան Սահակեան

Հայեպ.- « Օճնիկ Թոսապեան

Ռոսոսքո.- « Օր. Նունիկ Ա. Դեւունդեան

Էսկիքեհիր.- « Մուշեղ Էմիրխանեան

Աճիոն - Գարանիսար Տիար Սարգիս Տե-

միրեան

ԱՄԱՏԻՅԷ

شرائط اشترا
بر سنه لکي بر مجيد
النی آيلنی يارم مجيددر

صاحب امتياز و
مدبر مسئولی
حایقازون طبیبیان

سر محرری مناس ایکیجیان یاخود

طشره منادیسی

سیاسی فنی ادبی اقتصادی و اخلاقی غزته در
هر اون بش کونده بر نشر اولنور

تومرو ۹

۱۵ شباط ۱۳۲۷

برنجی سنا

محتویات

عاشق زیبا
اسکندر فهمی
علکسانظر قصایان
اسماعیل شوقی

امراض اجتماعیه
فقیر بر خانه
سن شرفی تعقیب ایتمه شرفه سنی تعقیب اینسون
تکذیب

مطبعه مزده ترکیه ارمنیجه رومجه فرانسیزجه و انگلیزجه ایسانلریله هر نوع اعلانات،

اوراق تجارت، تله، مکتوب باشلری، کتابلر، غزتهلر و مطبوعاته عائد سائر هر نوع
ایشار غایت تمیز و مزاق اوزره طبع اولیور. مقصد یگانه من محترم مشتریلمیزی غمن
قلماق در. هوونایان و یاردیمیان شرکاسی

Տպարանիս մէջ Տանկերէն, Հապերէն, Յունարէն, Յրանութիւն, եւ Անգլի-
իներէն լեզուներով ամէն տեսակ Ազդեր, Վաճառականական քղթեր,
Քարտ վիզիթներ, Նամակագրութիւն, Գրքեր, Թերթեր եւ տպագրական
ուրիշ ամէն տեսակ գործեր խիստ սափուր եւ հաշակաւոր կը տպագրուին:
Միակ նպատակնիս է զոն բոլոր յարգելի յանախորդները:

ՅՈՎՆԱՆՆԱՆ եւ ԵԱՐՏԳՐԱՆ

آماسیاده

مطبعه هوونایان و یاردیمیان